



Վերանայված է
«Այրի Բանկ» ՓԲԸ Խորհրդի
2020 թվականի հոկտեմբերի 20-ի
թիվ 13 արձանագրությամբ

Հաստատված է
«Այրի Բանկ» ՓԲԸ Խորհրդի
2018 թվականի դեկտեմբերի 28-ի
թիվ 12 արձանագրությամբ

Վ. Դիլանյան

«Այրի Բանկ» ՓԲԸ-ի ԿՈՂՄԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

Պատասխանատու ստորաբաժանում	Իրավաբանական վարչության
Կազմեց	Իրավաբանական վարչություն
Տարածում	Բանկի Խորհուրդ, Վարչություն, Վարչության նախագահ
Այլ դրույթներ	Սույն կանոններն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել Խորհրդի 26.07.2018թ. Նիստի թիվ 05 արձանագրությամբ հաստատված «Այրի Բանկ» ՓԲԸ-ի կողմից գործարքների կնքման կանոնները
Առնչվող փաստաթղթեր	«Այրի Բանկ» ՓԲԸ Կանոնադրություն

	RG-0900-0500-01			
«Այրի Բանկ» ՓԲԸ-ի ԿՈՂՄԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ	Կիրառման ամսաթիվը 08.01.2019թ.	Խմբագրություն 1	էջ 2 / 7	

«Այրի Բանկ» ՓԲԸ-ի կողմից գործարքների կնքման կանոններ

1. Սույն կանոնները հաստատվում են՝ համաձայն «Այրի Բանկ» ՓԲԸ-ի կանոնադրության 16.13 կետի իս) ենթակետի, և սահմանում են «Այրի Բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) կողմից ակտիվների օտարման և ձեռք բերման, ինչպես նաև աշխատանքների և/կամ ծառայությունների ձեռք բերման, ծախս (պարտավորություն) առաջացնող գործարքների կնքման համար իրավասու մարմինների կողմից որոշումների ընդունման գործընթացը և սահմանաչափերը:

2. Սեփականության իրավունքով Բանկին պատկանող անշարժ գույքի օտարումը կամ դրա օտարմանը հանգեցնող գործարքները (գրավադրում, ձեռքբերման պայմանով վարձակալություն և այլն), բացառությամբ գրավի առարկայի բռնագանձման դեպքում որպես գրավառու գրավի առարկան ուղղակի վաճառքի կամ աճուրդի միջոցով իրացնելու գործարքների, իրականացվում են հետևյալ կանոնների պահպանմամբ.

2.1. 100,000,000 (մեկ հարյուր միլիոն) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը չգերազանցող շուկայական արժեք ունեցող անշարժ գույքի օտարումն իրականացվում է Բանկի վարչության նախագահի կողմից՝ նրա կողմից որոշված պայմաններով,



2.2. 100,000,000 (մեկ հարյուր միլիոն) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը գերազանցող, սակայն 250,000,000 (երկու հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը չգերազանցող շուկայական արժեք ունեցող անշարժ գույքի օտարման դեպքում օտարման որոշումը (որում ներառվում են գործարքի էական պայմանները) կայացնում է Բանկի վարչությունը,

2.3. 250,000,000 (երկու հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը գերազանցող շուկայական արժեք ունեցող անշարժ գույքի օտարման դեպքում օտարման որոշումը (որում ներառվում են գործարքի էական պայմանները) կայացնում է Բանկի խորհուրդը,

2.4. անկախ սույն կանոնների 2.1., 2.2. և 2.3. կետերով նախատեսված սահմանաչափերի՝ յուրաքանչյուր դեպքում, երբ գույքի օտարման արդյունքում Բանկը կարող է կրել տվյալ գույքի հաշվեկշռային արժեքի 25 և ավել տոկոսի չափով վնաս, գույքը օտարելու մասին որոշումը (որում ներառվում են գործարքի էական պայմանները) կայացնում է Բանկի խորհուրդը:

Սույն կետի իմաստով վնաս է համարվում գույքի հաշվեկշռային արժեքի և գործարքի գնի բացասական տարբերությունը: Գույքի հաշվեկշռային արժեքի մասին տեղեկանքը տրամադրվում է գործարքի կողմի պահանջով:

3. Բանկի կողմից սեփականության իրավունքով անշարժ գույքի ձեռքբերումը կամ ձեռքբերմանը հանգեցնող գործարքները (ձեռքբերման պայմանով վարձակալություն և այլն), բացառությամբ գույքը որպես գրավ ընդունելու գործարքների, իրականացվում են հետևյալ կանոնների պահպանմամբ.

	RG-0900-0500-01			
«Այդի Բանկ» ՓԲԸ-ի ԿՈՂՄԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ	Կիրառման ամսաթիվը 08.01.2019թ.	Խմբագրություն 1	էջ 3 / 7	

3.1. 250,000,000 (երկու հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը չգերազանցող շուկայական արժեք ունեցող անշարժ գույքի ձեռքբերման գործարքները կնքվում են Բանկի վարչության նախագահի կողմից՝ նրա կողմից որոշված պայմաններով,

3.2. 250,000,000 (երկու հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը գերազանցող, սակայն 500,000,000 (հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը չգերազանցող շուկայական արժեք ունեցող անշարժ գույքի ձեռքբերման որոշումը (որում ներառվում են գործարքի էական պայմանները) կայացնում է Բանկի վարչությունը,

3.3. 500,000,000 (հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը գերազանցող շուկայական արժեք ունեցող անշարժ գույքի ձեռքբերման որոշումը (որում ներառվում են գործարքի էական պայմանները) կայացնում է Բանկի խորհուրդը:

4. Բանկի կողմից տրամադրված վարկերի օտարման (պահանջի իրավունքի գիշման) կամ այլ անձանց կողմից տրամադրված վարկերի, փոխառությունների նկատմամբ պահանջի իրավունքի ձեռքբերման գործարքներն իրականացվում են հետևյալ կանոնների պահպանմամբ.



4.1. 250,000,000 (երկու հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը չգերազանցող արժեք ունեցող գործարքներն իրականացվում են Բանկի վարչության որոշման հիման վրա, որով սահմանվում են նաև գործարքի էական պայմանները,

4.2. 250,000,000 (երկու հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամը կամ դրան համարժեք որևէ արտարժույթը գերազանցող արժեք ունեցող գործարքներն իրականացվում են Բանկի խորհրդի որոշմամբ, որով սահմանվում են նաև գործարքի էական պայմանները:

5. Ածանցյալ ֆինանսական գործիքների կիրառմամբ բոլոր գործարքները, բացառությամբ երեք ամիս ժամկետը չգերազանցող արտարժույթային կամ տոկոսային սվոփերի և ֆորվարդային գործարքների, իրականացվում են Բանկի վարչության որոշման հիման վրա, որով սահմանվում են այդ գործարքների էական պայմանները:

6. Արժեթղթերով կամ արժեթղթերի կիրառմամբ բոլոր գործարքները, բացառությամբ Բանկի կողմից թողարկված արժեթղթերով, ինչպես նաև ՀՀ Կենտրոնական բանկի և ՀՀ ֆինանսների նախարարության հետ կնքվող գործարքների, իրականացվում են հետևյալ սահմանաչափերի պահպանմամբ.

6.1. 250,000,000 (երկու հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը չգերազանցող արժեք ունեցող գործարքներն իրականացվում են Բանկի վարչության նախագահի կողմից,

	RG-0900-0500-01			
«Այդի Բանկ» ՓԲԸ-ի ԿՈՂՄԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ	Կիրառման ամսաթիվը 08.01.2019թ.	Խմբագրություն 1	էջ 4 / 7	

6.2. 250,000,000 (երկու հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը գերազանցող արժեք ունեցող գործարքներն իրականացվում են Բանկի Խորհրդի որոշման հիման վրա, որով սահմանվում են այդ գործարքների էական պայմանները:

7. ՀՀ պետական արժեթղթերով կամ այդ արժեթղթերի կիրառմամբ բոլոր գործարքները (բացառությամբ ռեպո գործարքների, որոնց համար սահմանափակում չի սահմանվում) իրականացվում են հետևյալ սահմանաչափերի պահպանմամբ.

7.1. 1,000,000,000 (մեկ միլիարդ) ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը չգերազանցող արժեք ունեցող գործարքներն իրականացվում են Բանկի վարչության նախագահի կողմից,

7.2. 1,000,000,000 (մեկ միլիարդ) ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը գերազանցող, սակայն 1,500,000,000 (մեկ միլիարդ հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը չգերազանցող արժեք ունեցող գործարքներն իրականացվում են Բանկի վարչության որոշման հիման վրա, որով սահմանվում են այդ գործարքների էական պայմանները,

7.3. 1,500,000,000 (մեկ միլիարդ հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը գերազանցող արժեք ունեցող գործարքներն իրականացվում են Բանկի Խորհրդի որոշման հիման վրա, որով սահմանվում են այդ գործարքների էական պայմանները:



8. Բանկի կողմից կնքվող բոլոր գործարքները, որոնցով նախատեսված է կամ որոնք կարող ենք հանգեցնել Բանկի համար՝

8.1. 250,000,000 (երկու հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը չգերազանցող գումարի չափով տուժանքի կամ այդ չափով որևէ այլ պատասխանատվության, կնքվում են Բանկի վարչության նախագահի կողմից,

8.2. 250,000,000 (երկու հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը գերազանցող գումարի չափով տուժանքի կամ այդ չափով որևէ այլ պատասխանատվության, կնքվում են Բանկի Խորհրդի որոշման հիման վրա, որով սահմանվում են նաև այդ գործարքի էական պայմանները:

9. Բանկի կողմից մտավոր սեփականության օբյեկտների կամ Բանկի նույնականացման միջոցների օտարման, օտարմանը հանգեցնող, դրանք երրորդ անձի կողմից օգտագործման կամ որևէ երրորդ անձի մոտ դրանց նկատմամբ որևէ իրավունքների հանգեցնող ցանկացած գործարք ենթակա է կնքման Բանկի Խորհրդի որոշման հիման վրա:

10. Բանկի կողմից ակտիվների ձեռքբերման հետ չկապված գործարքները, այն է՝ աշխատանքների և/կամ ծառայությունների (ներառյալ խորհրդատվական ծառայությունների) ձեռք բերման գործարքները, իրականացվում են հետևյալ կարգով.

	RG-0900-0500-01			
«Այդի Բանկ» ՓԲԸ-ի ԿՈՂՄԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ	Կիրառման ամսաթիվը 08.01.2019թ.	Խմբագրություն 1	էջ 5 / 7	

10.1. 150,000,000 (հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը չգերազանցող գործարքներն իրականացվում են Բանկի Վարչության Նախագահի կողմից,

10.2. 150,000,000 (հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը գերազանցող, սակայն 250,000,000 (երկու հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը չգերազանցող գործարքներն իրականացվում են Բանկի Վարչության որոշմամբ, որը հաստատում է նաև գործարքի էական պայմանները,

10.3. 250,000,000 (երկու հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը գերազանցող գործարքներն իրականացվում են Բանկի խորհրդի որոշմամբ, որը հաստատում է նաև գործարքի էական պայմանները:

11. Բանկի կողմից ֆինանսավորման ներգրավման բոլոր գործարքները, որոնք գերազանցում են 2,500,000,000 (երկու միլիարդ հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը կամ որոնք ժամկետը գերազանցում է երեք տարին (բացառությամբ մանկական ավանդի), կնքվում են Բանկի խորհրդի որոշման հիման վրա, որը հաստատում է նաև գործարքի էական պայմանները:

12. Բանկի կողմից այլ բանկերի և վարկային կազմակերպությունների առանց գրավային ապահովության ֆինանսավորման տրամադրումը և դրա պայմանների հետագա վերանայումը (ռեստրոկտորիզացիան) իրականացվում է հետևյալ սահմանաչափերի պահպանմամբ.

12.1. 1,000,000,000 (մեկ միլիարդ) ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը չգերազանցող գործարքներն իրականացվում են Բանկի վարչության Նախագահի կողմից,

12.2. 1,000,000,000 (մեկ միլիարդ) ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը գերազանցող գործարքներն իրականացվում են Բանկի Վարչության որոշման հիման վրա, որով սահմանվում են այդ գործարքների էական պայմանները:

13. Բանկի կողմից՝ բռնազանձման արդյունքում գրավադրված գույքի ձեռքբերման հետ կապված գործարքները, բացառությամբ հրապարակային սակարկությունների միջոցով գույքի ձեռքբերման գործարքների, իրականացվում են.

13.1 250,000,000 (երկու հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը չգերազանցող շուկայական արժեք ունեցող անշարժ գույքի ձեռքբերման գործարքները կնքվում են Բանկի վարչության Նախագահի կողմից՝ նրա կողմից որոշված պայմաններով,

13.2. 250,000,000 (երկու հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը գերազանցող, սակայն 500,000,000 (հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը չգերազանցող շուկայական արժեք ունեցող անշարժ գույքի

	RG-0900-0500-01			
«Այդի Բանկ» ՓԲԸ-ի ԿՈՂՄԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ	Կիրառման ամսաթիվը 08.01.2019թ.	Խմբագրություն 1	Էջ 6 / 7	ՆԵՐՔԻՆ

ձեռքբերման որոշումը (որում ներառվում են գործարքի էական պայմանները) կայացնում է Բանկի վարչությունը,

13.3. 500,000,000 (հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը գերազանցող շուկայական արժեք ունեցող անշարժ գույքի ձեռքբերման գործարքների մասին որոշումը (որում ներառվում են գործարքի էական պայմանները) կայացնում է Բանկի խորհուրդը:

14. Բանկի սեփականությունը հանդիսացող և սույն Կանոնների այլ կետերում չնշված շարժական գույքի օտարումը կամ օտարում ենթադրող գործարքները (գրավադրում, ձեռքբերման պայմանով վարձակալություն, պահանջի գիշում և այլն), ինչպես նաև երկու կամ ավելի փոխկապակցված գործարքները կնքվում են.

14.1. 5,000,000 (հինգ միլիոն) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը չգերազանցող հաշվեկշռային արժեք ունեցող ակտիվների օտարման դեպքում Բանկի վարչության նախագահի կողմից,


14.2. 5,000,000 (հինգ միլիոն) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը գերազանցող, սակայն 50,000,000 (հիսուն միլիոն) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը չգերազանցող հաշվեկշռային արժեք ունեցող ակտիվների օտարման դեպքում Բանկի վարչության որոշման հիման վրա, որում ներառվում են գործարքի էական պայմանները,

14.3. 50,000,000 (հիսուն միլիոն) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը գերազանցող հաշվեկշռային արժեք ունեցող հիմնական միջոցների օտարման դեպքում Բանկի խորհրդի որոշման հիման վրա, որում ներառվում են նաև գործարքի էական պայմանները:

15. Սույն կանոններով նախատեսված սահմանափակումները տարածվում են նաև միատեսակ և/կամ փոխկապակցված գործարքների նկատմամբ, որոնք սույն կանոնների իմաստով համարվում են մեկ գործարք: Սույն կանոնների իմաստով միատեսակ և/կամ փոխկապակցված գործարքներ են համարվում եռամսյա ժամանակահատվածում երկու կամ ավելի նույն առարկայով գործարքները, որոնք կնքվում են նույն կոնտրագենտի կամ տվյալ կոնտրագենտի հետ փոխկապակցված անձի հետ («Բանկերի եվ բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մաս):

16. Սույն կանոնները չեն տարածվում Բանկի կողմից՝ իր բնականոն գործունեության իրականացման ընթացքում սովորաբար կիրառվող պայմաններով (Բանկի կայքէջում հրապարակված պայմաններով) վարկերի տրամադրման, ավանդների ներգրավման, արժեթղթերի տեղաբաշխման, ինչպես նաև Բանկի հանդեպ առկա պարտքն այլ անձի փոխանցման գործարքների վրա, որոնք կարգավորվում են Բանկի համապատասխան ներքին իրավական այլ ակտերով:

17. Սույն կանոններով նախատեսված խորհրդին վերապահված որոշումների կայացումն իրականացվում է առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում հետևյալ կարգով.

 IDBank	RG-0900-0500-01			
«Այրի Բանկ» ՓԲԸ-ի ԿՈՂՄԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ	Կիրառման ամսաթիվը 08.01.2019թ.	Խմբագրություն 1	էջ 7 / 7	

- 1) Խորհրդի նախագահը, համապատասխան շահագրգիռ ստորաբաժանումից ստանալով և ուսումնասիրելով առաջարկվող գործարքի էական պայմանները, ուղարկում է այն Խորհրդի անդամներին՝ վերջիններիս համաձայնությունը ստանալու նպատակով՝ նշելով դրանց ներկայացման վերջնաժամկետները:
- 2) Խորհրդի անդամների կարծիքների ամփոփման հիման վրա՝ Խորհուրդը կայացնում է հետևյալ որոշումներից մեկը.

- ա) գործարքի կնքումը, այդ թվում՝ դրա էական պայմանները հաստատելու վերաբերյալ (եթե առկա է Խորհրդի հինգ անդամներից առնվազն երեքի դրական դիրքորոշումը),
- բ) գործարքի կնքումը չհաստատելու վերաբերյալ (եթե առկա է Խորհրդի հինգ անդամներից առնվազն երեքի բացասական դիրքորոշումը):